ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2018

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռեկտորի ողջույնի խոսքը ..... 5
Հայաստանի ազգային ագրարային համալսարան..... 6
Հայ-ամերիկյան ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն.....7
Լեզվի ուսուցման կենտրոն .....8
ՀԱԱՀ մասնաճյուղերը .....9
ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղ ..... 9
ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղ.....10
Կրթության որակի ապահովում..... 10
Ուսումնական գործընթաց .....12
Ուսանողի հիմնական իրավունքներն ու պարտականությունները...12
Գնահատման համակարգը.....17
Գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդաբանությունը և կարգը ..... 18
Գնահատման բազմագործոն համակարգը..... 18
Գիտելիքների գնահատման եղանակները ..... 19
Կրեդիտային համակարգը.....20
Ուսանողների ուսումնական բեռնվածությունը (կրթական ծրագրի աշխատածավալը) և կրեդիտների հատկացումը .....21
Ուսումնական գործընթացը նկարագրող հիմնական հասկացությունները .....23
Ուսանողական տոմս..... 23
Ստուգման գրքույկ ..... 23
Դասախոսություն..... 23
Գործնական պարապմունք ..... 24
Լաբորատոր աշխատանք ..... 24
Անհատական աշխատանք..... 24
Ինքնուրույն աշխատանք..... 24
Կուրսային աշխատանք..... 25
Ավարտական աշխատանք..... 25
Ակտիվություն ..... 26
Հաճախումներ ..... 26
Պրակտիկա ..... 26
Խորհրդատվություն .....27
Կամընտրովի առարկաներ .....27

Էլեկտրոնային ուսուցում ..... 27
OFFICE 365 ամպային տեխնոլոգիաների փաթեթ ..... 28
Ուսանողական միջավայր ..... 29
Ուսանողական կառույցներ. ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն ..... 29
Ուսանողի մասնակցությունը ՀԱԱՀ կառավարման մարմիններում 30
Ուսանողին մատուցվող ծառայություններ ..... 32
ՀԱԱՀ գրադարան ..... 32
Գրադարանից օգտվելու կանոնները ..... 32
Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժին ..... 33
Արտաքին կապերի դեպարտամենտ ..... 33
«ԱՐԱԲԿԻՐ» ուսանողական հանրակացարան ..... 35
Ուսանողական ժամանց ..... 36
ՀԱԱՀ թանգարան ..... 36
Շախմատի թանգարան-ակումբ ..... 37
Ինքնագործ խումբ ..... 38
«ՁԱՐԹՈՆՔ» հանգստյան տուն ..... 38
ՀԱԱՀ-ի պաշտոնական տեղեկատվության աղբյուրներ ..... 40

# ՌԵԿՏՈՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Սիրելի՝ առաջին կուրսեցիներ,
Ողջունում եմ ձեր մուտքը Հայաստանի ազգային ագրարային համալսարան: Գրեթե 9 տասնամյակների պատմություն և փառավոր ավանդույթներ ունեցող համալսարանում ձեր ուսումնառության սկիզբը համընկավ արմատական փոփոխությունների մեկնարկի հետ: Ագրարային կրթության առջև ծառացած մարտահրավերները հաղթահարելու և բարեփոխումներ իրականացնելու փուլը մենք միասին ենք սկսում՝ դուք որպես առաջին կուրսեցիներ, ես որպես համալսարանի ռեկտորի նորընտիր պաշտոնակատար:

Ուզում եմ հավաստիացնել, որ համալսարանի ղեկավարության համար դուք սոսկ ուսանողներ չեք, այլև լիիրավ գործընկերներ: Կասկածից վեր է, որ այդ գործընկերությունը տալու է իր պտուղները. համալսարանը լիարժեք կերպով օգտագործելու է իր մարդկային ու տեխնոլոգիական բոլոր ռեսուրսներն ու բարի կամքը՝ ձեզ համար ուղի հարթելով դեպի լավագույն մասնագիտական կարիերա: Մյուս կողմից, հենց դուք եք լինելու Համալսարանում սկսված բարեփոխումների ոչ միայն կրողն ու շահառուն, այլև ամենաակտիվ մասնակիցը:

Մենք միասին սկսում ենք Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պատմության նոր փուլը: Մենք հետևողականորեն գնալու ենք ուսումնական պլանների, կրթության կառավարման գործելակերպերի, ուսանող-դասախոս հարաբերությունների արմատական բարելավման ճանապարհով և միասին ենք հաղթահարելու այդ ճանապարհին սպասվող դժվարությունները: Մենք ստեղծելու ենք դասավանդման և ուսումնառության այնպիսի միջավայր, որտեղ ուշադրության կենտրոնում լինելու եք դուք՝ ուսանողներդ և ձեր կրթական շահերը:

Շնորհավորելով ձեզ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանող դառնալու կապակցությամբ, մաղթում եմ ստեղծագործ աշխատանքով լի բարի ընթացք: Մենք խրախուսելու ենք ձեր ստեղծագործ աշխատանքը, մասնագիտական բարձունքների հասնելու ձեր ձգտումը և, որ պակաս կարևոր չէ, որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի ձեր ակտիվ դիրքորոշումը:

Այս ուղեցույցը ձեզ կօգնի ծանոթանալ համալսարանի անցած ուղուն և ընթացիկ գործունեությանը, ինչպես նաև արդյունավետ կերպով և հնարավորինս արագ ինտեգրվել համալսարանական կյանքին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ազգային ագրարարային համալսարանն ունի երկար տարիների պատմություն և հարուստ ավանդույթներ: Որպես Հայկական գյուղատնտեսական ակադեմիա՝ այն կազմավորվել է 1994թ. Հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների միավորման արդյունքում:

Երկու բուհերն էլ բացառիկ դեր են ունեցել ոչ միայն հանրապետության, այլ նաև նախկին Խորհրդային Միության ագրոպարենային ոլորտի զարգացման գործում: Առանձնահատուկ կարևորում եմ այն, որ իր ներկայիս անվանումը բուհն ստացել է 2012 թվականին՝ վերահաստատելով ազգային արժեք լինելու փաստը:

*ՀԱԱՀ առաքելությունը*

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի առաքելությունն է համախմբելով կրթության ու գիտության կադրային և նյութական ռեսուրսները, հետազոտական ներուժը, ինչպես նաև ապահովելով որակյալ կրթություն՝ Հայաստանում ու տարածաշրջանում դառնալ ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն:

*ՀԱԱՀ տեսլականը*

Համալսարանն իր առաքելությունն իրականացնելու արդյունքում լինելու է գիտելիք ու առաջավոր տեխնոլոգիաներ տարածող, կրթական ու հետազոտական ինովացիոն գործունեություն իրականացնող ուսանողակենտրոն կրթական միջավայր ու կրթության լայն մատչելիություն ապահովող, ձևավորված որակի մշակույթ ունեցող հաստատություն, որը կծառայի երկրին, ազգին ու աշխարհին:

*Տե՛ս anau.am կայքում Մեր մասին*

## ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը հիմնադրվել է 2000 թվականին՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանի և Տեխասի Էյ ընդ Էմ (A&M) համալսարանի գործակցային համաձայնագրի հիման վրա և ԱՄՆ գյուղդեպարտամենտի ֆինանսատեխնիկական աջակցությամբ: ԱՈՒԿ-ն ամերիկյան ոճի ագրոբիզնեսի կրթություն ապահովող եզակի և հաջողված սինթեզ է՝ հարմարեցված Հայաստանի պայմաններին: ԱՈՒԿ-ը պատրաստում է տնտեսագիտության, մարքեթինգի և կառավարման լայն մտահորիզոն ունեցող, ժամանակակից հաղորդակցական հմտություններով և անգլերենի գերազանց իմացությամբ մասնագետներ: Այս ամենը ԱՈՒԿ-ի շրջանավարտներին մրցունակ է դարձնում երկու երկրների ագրոբիզնեսի հատվածում, ֆինանսական հաստատություններում, միջազգային կազմակերպություններում:

ԱՈՒԿ-ն առաջարկում է «Ագրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտությամբ 2 տարվա ծրագիր՝ ներկառուցված Հայաստանի պետական ագրարային համալսարանի 4 տարվա համապատասխան բակալավրիական ծրագրում, ինչպես և ագրոբիզնեսի մագիստրոսական 18 ամսվա ծրագիր: Դասերն անցկացվում են անգլերենով՝ ամերիկացի և հայ դասախոսների կողմից: Լսարանները և համակարգչային սրահը կահավորված են ժամանակակից սարքավորումներով և տեխնիկայով, որոնք ապահովում են ուսանողների համար կատարյալ աշխատանքային միջավայր և՛ լսարանական, և՛ անհատական պարապմունքների համար:

ԱՈՒԿ-ի մագիստրոսական ծրագիրը շրջանավարտներին տրամադրում է միջազգային չափորոշիչներին համապատասխան մագիստրոսական աստիճան, ինչպես նաև Տեխասի A&M համալսարանի հավաստագիր:

ԱՈՒԿ-ի բարի համբավի բաղկացուցիչ մասերից մեկն էլ գործընկեր ձեռնարկությունների և ընկերությունների հետ արդյունավետ պրակտիկա կազմակերպելու կարողությունն է: Մշտական գործընկեր կազմակերպությունների ցանկն ամեն տարի համալրվում է ԱՈՒԿ-ի հետ գործակցելու ցանկություն ունեցող նոր ընկերություններով:

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի բակալավրիատ ընդունվելու համար դիմորդը պետք է բավարարի հետևյալ պահանջներից առնվազն մեկը՝

- ավարտած լինի ՀԱԱՀ «Ագրոբիզնեսի և շուկայաբանության» կամ այլ մասնագիտությունների առաջին երկու կուրսերի ծրագիրը և ցուցաբերի անգլերենի բավարար իմացություն,
- ավարտած լինի ՀԱԱՀ-ն՝ այլ մասնագիտությունների գծով կամ՝ այլ պետական բուհ:

Մագիստրոսական ծրագիր ընդունվելու համար պահանջվում է՝

- բակալավրի աստիճան՝ առնվազն 3.0 միջին գնահատականով (հնարավոր 4.0-ից).
- բակալավրիատում անցած լինի «Հաշվապահություն», «Վիճակագրություն», «Մակրոտնտեսագիտություն», «Միկրոտնտեսագիտություն» կամ «Գյուղատնտեսական տնտեսագիտություն» առարկաները
- տիրապետի անգլերենին և ունենա համակարգչային հմտություններ:

## ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հիմնադրվել է 2002 թ.: Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և ռուսերեն լեզուների ուսուցում է կազմակերպում համալսարանի աշխատակիցների, ասպիրանտների և այն ուսանողների համար, ովքեր նշված լեզուների՝ բուհական պարտադիր ծրագրի յուրացումից հետո ցանկանում են խորացնել և ընդլայնել իրենց գիտելիքները:

Պարապմունքներն ընթանում են միայն դասավանդվող օտար լեզվով՝ ժամանակակից աուդիովիզուալ և համակարգչային տեխնիկայի օգնությամբ, կարևորվում է ունկնդրելու և բանավոր

խոսքի անկաշկանդ զարգացումը՝ յուրաքանչյուր ունկնդրին ցուցաբերելով անհատական մոտեցում:

Կենտրոնում գործում է նաև համակարգչային տեխնիկայով և INTERNET կապով ապահովված լսարան, որը նախատեսված է ուսանողների ինքնուրույն ուսուցման ու անհատական աշխատանքների համար: Ուսանողներին հնարավորություն է ընձեռվում օտար լեզվով ցանկացած նյութն ընկալել մագնիտոֆոնային ձայնագրությունների, ինչպես նաև համակարգչային ծրագրերի, CD-ների և DVD-ների օգնությամբ, ինչը նպաստում է լեզվի ավելի խորը յուրացմանը:

Լեզվի կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները մատչելի են. ՀԱԱՀ ուսանողների համար մեկ ամսվա վարձավճարը կազմում է 7000 ՀՀ դրամ, իսկ այլ բուհերի ուսանողների համար՝ 8000 ՀՀ դրամ:

*Տե՛ս anau.am կայքում Կրթական կենտրոններ/Լեզվի ուսուցման կենտրոն*

## ՀԱԱՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը մասնաճյուղեր ունի Վանաձորում, Սիսիանում և Շուշիում (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն):

**ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղում** գործում է հեռակա ուսուցում, որը կազմակերպվում է ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

Մասնաճյուղն ունի կահավորված գրադարան-ընթերցասրահ, էլեկտրոնային գրադարան, առկա են կարևոր լաբորատորիաներ: Գործում է նաև հենակետային գյուղատնտեսական քոլեջը՝ առկա ուսուցմամբ:

Ուսումնական և արտադրական պրակտիկաները անցկացվում են ինչպես Սպիտակի ուսումնափորձնական տնտեսությունում, այնպես էլ՝ ձեռնարկություններում և կազմակերպություններում:

*Տե՛ս anau.am կայքում Մասնաճյուղեր/Վանաձոր*

**ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղն** ունի մասնագիտական, գրականությամբ հագեցած գրադարան: Ուսանողներն իրենց նախադիպլոմային արտադրական պրակտիկան անցնում են պետական և մասնավոր կազմակերպություններում, ինչպես նաև մասնաճյուղի ուսումնափորձնական տնտեսությունում: Մասնաճյուղի տարածքում «Վորլդ Վիժն» ՄԲԿ Սիսիանի տարածքային զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ կառուցվել և շահագործման է հանձնվել ջերմոց, որտեղ ուսանողները հարստացնում են իրենց գործնական ու պրակտիկ գիտելիքները: 2007-2008 ուսումնական տարում իր գործունեությունն է սկսել մասնաճյուղի հենակետային քոլեջը՝ առկա ուսուցմամբ:

*Տե՛ս anau.am կայքում Մասնաճյուղեր/Սիսիան*

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Որակյալ կրթությունն առաջնային է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի աշխատակազմի համար: ՀԱԱՀ–ում կրթության որակի ապահովման հարցերով զբաղվում է Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների (ԿԲՌՊՆՏ) բաժինը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը շահակից կողմերի՝ դիմորդների, ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների շրջանում պարբերաբար կատարում է հարցումներ, որոնք հնարավորություն են ընձեռում ստացված տվյալների միջոցով պատկերացում կազմել ՀԱԱՀ-ի տրամադրած ծառայությունների որակի մասին և իրականացնել բարեփոխումներ:

ՀԱԱՀ ուսանողները կարող են մասնակից դառնալ ինչպես բուհի, այնպես էլ ֆակուլտետային որակի ապահովման խմբերի աշխատանքներին:

Ուսանողները նաև կարող են դառնալ ուսանող-փորձագետ՝ գրանցվելով և մասնակցելով «Ուսանողության ձայն» նախագծի «Ուսանող-փորձագետների պատրաստման» դասընթացին՝ նախատեսված բուհերի և քոլեջների ուսանողների համար:

Դասընթացի արդյունքնում ուսանողները

- դառնալու են ուսանող-փորձագետների թեկնածուներ,
- ձեռք են բերելու գիտելիքներ կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումների վերաբերյալ,
- կատարելու են վերլուծական աշխատանքներ,
- հանդիպելու են ուսանող-փորձագետների, փորձագետների, բուհերի ներկայացուցիչների հետ:

Դասընթացն ԱՆՎՃԱՐ Է:

*Տե՛ս anau.am կայքում ՀԱԱՀ/Որակի ապահովում*

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ճանաչիր քո իրավունքները, որպեսզի կարողանաս պաշտպանել դրանք:

## ՈՒՍԱՆՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Համալսարանի ուսանողներն իրավունք ունեն՝**

- ստանալ գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ,
- մասնակցել ուսումնագիտական, հետազոտական աշխատանք-ներին, գիտաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումների
- մասնակցել ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությունը
- օգտվել համալսարանի հանրակացարանից, հանգստյան տնից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնա-կան, գիտական և այլ ստորաբաժանումների ծառայություններից
- ստեղծել ուսանողական հասարակական կազմակերպություններ ուսանողական կյանքին վերաբերող հարցերի լուծման համար
- ընդգրկվել համալսարանի և նրա ստորաբաժանումների ղեկավար մարմինների կազմում
- կրթությունն ընդհատած նախկին ուսանողը սահմանված կարգով իրավունք ունի վերականգնվել բարձրագույն ուսումնական հաստատությունում:

**Համալսարանի ուսանողները պարտավոր են՝**

- խորությամբ և բազմակողմանի տիրապետել ընտրած մասնագիտությանը, գործնական հմտություններին և հետազոտությունների ժամանակակից եղանակներին
- պարտադիր հաճախել դասախոսություններին, լաբորատոր ու գործնական պարապմունքներին
- սահմանված ժամկետներում կատարել ուսումնական պլանով և ծրագրերով նախատեսված բոլոր տեսակի առաջադրանքները
- խստորեն ենթարկվել համալսարանի ներքին կարգապահության կանոններին
- խնամքով վերաբերվել համալսարանի գույքին, ճիշտ օգտվել կառույցներից, սարքավորումներից, շենքերից, տնտեսել նյութական

միջոցները: Համալսարանի սեփականություն համարվող գույքին պատճառած վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն՝ գործող օրենսդրությանը համապատասխան

- հարգելի պատճառով պարապմունքներին չներկայանալու դեպքում ուսանողը պարտավոր է ոչ ուշ քան հաջորդ օրը տեղյակ պահել ֆակուլտետի դեկանին և ուսումնական հաստատություն ներկայանալու առաջին իսկ օրը ներկայացնել փաստաթղթեր պարապմունքները բաց թողնելու պատճառների մասին
- դասախոսի լսարան մտնելու ժամանակ ուսանողները պարտավոր են ոտքի կանգնել
- վճարովի հիմունքներով կրթություն ստացող ուսանողները պարտավոր են ժամանակին վճարել ուսման վարձը:

**Ուսանողների ֆինանսական իրավունքները, պարտականությունները և դրանց իրականացման կարգը.**

1. Ուսանողն իրավունք ունի օգտվել ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից
   - Ուսանողի ուսման վարձը, ուսման առաջադիմության հիման վրա, ուսանողական նպաստի ձևով, լրիվ կամ մասնակիորեն փոխհատուցվում է ՀՀ Կառավարության կողմից՝ ամեն տարի տվյալ բուհին և մասնագիտությանը հատկացվող տեղերի ու ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:
   - Սոցիալապես անապահով ուսանողներին պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ (100 %) փոխհատուցում տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
   - Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողներին: Մյուս կուրսերում ուսանողական նպաստ տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:
   - Ուսանողի բարձր առաջադիմության և սոցիալական վիճակի

արդյունքների հաշվառմամբ, համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու չափանիշներն ու կարգը սահմանում է համալսարանը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողները ստանում են ուսանողական կրթաթոշակ պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակներ, դրամաշնորհներ, ուսանողական վարկեր:
3. Պետական կրթաթոշակը խրախուսման նպատակով տրվում է գերազանց կամ լավ առաջադիմություն և հասարակական ակտիվություն ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին: Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների:
4. Վճարովի ուսումնառության պայմաններում սովորողները պարտավոր են վճարել սահմանված ուսման վարձը՝ ուսումնառության յուրաքանչյուր կիսամյակի համար: Ուսման վարձը յուրաքանչյուր կիսամյակի առաջին ամսվա ընթացքում ժամանակին չվճարելու դեպքում ուսանողը կարող է հեռացվել համալսարանից:
5. Ուսման վարձը կայուն է ուսումնառության պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի ողջ ժամանակահատվածի համար՝ ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում:
6. Վճարովի ուսուցմամբ սովորող ուսանողի ավելի վճարած ուսման վարձը, որպես կանխավճար, փոխանցվում է որպես հաջորդ կուրսի ուսման վարձ:
7. Վճարովի ուսուցմամբ սովորող ուսանողն ուսման վարձը վճարելուց հետո իր վճարումների մասին պարտավոր է տեղեկացնել դեկանատ:
8. Զինվորական ծառայության մեկնելու կապակցությամբ տարկետ-ման պատճառով ուսումն ընդհատելու և հետագայում սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնելու դեպքում

ուսման վարձը վճարվում է նախկին պայմանագրով նախատեսված չափով:

9. Ուսման վարձը մուծվում է կանխիկ՝ համալսարանի դրամարկղ կամ փոխանցման կարգով՝ համալսարանին սպասարկող բանկերում բացված հաշվարկային հաշիվներին:

Համալսարանի՝ վճարովի համակարգում սովորող յուրաքանչյուր ուսանող որոշակի պայմանների բավարարելու դեպքում իրավունք ունի օգտվելու վարձավճարի գործող զեղչային համակարգից:

Այդ համակարգի, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների կողմից վարձավճարների մասնակի փոխհատուցման մասին տեղեկատվության համար կարող եք դիմել դեկանատ, Ձեր կուրսի աշխատանքները համակարգող աշխատակցին, Ուսանողական խորհուրդ, ինչպես նաև պարբերաբար այցելել ՀԱԱՀ պաշտոնական կայքէջի Կրթաթոշակներ բաժինը, որտեղ մշտապես տեղադրվում են նորություններ:

**Կարգապահական տույժեր, համալսարանից հեռացման և ազատման հիմքերը.**

1. Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.
   ա/ նկատողություն,
   բ/ խիստ նկատողություն,
   գ/ համալսարանից հեռացում /ազատում/:
   Այն ուսանողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ուսումնական գործընթացի ժամանակացույցը, համալսարանի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա լիազորած անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև համալսարանից հեռացվելը:
2. Ուսանողը հեռացվում է բուհից.
   ա/ անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու

պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում,
բ/ բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում
գ/ բուհի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում: Ուսանողին համալսարանից հեռացնելիս հաշվի է առնվում նաև համալսարանի ուսանողական խորհրդի կարծիքը: Կարգապահական տույժերը կիրառվում են անմիջապես զանցանքի հայտնաբերման պահից: Եթե ուսանողը մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվում, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված: Արգելվում է ուսանողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում: Համալսարանից հեռացվելու դեպքում ուսանողի աշխատանքային գրքույկում նշում է կատարվում ուսման ժամանակահատվածի մասին՝ առանց հեռացման պատճառները նշելու:

3. Ուսանողը ազատվում է բուհից.
   ա/ իր դիմումի համաձայն,
   բ/ այլ բուհ տեղափոխվելու դեպքում:
4. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.
   ա/ ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,
   բ/ առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում, գ/ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի:

Դասերից հաճախակի բացակայելու արդյունքում Դուք ոչ միայն կզրկվեք գիտելիքներ ձեռք բերելու հնարավորությունից, այլև կարող եք ստանալ նկատողություն, ընդհուպ մինչև հեռացվել համալսարանից:

*Տե՛ս anau.am կայքում*
*Փաստաթղթեր/Կանոնակարգեր*

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՈՒսանողի գիտելիքների մակարդակի և որակի գնահատման համար Հայաստանի ազգային ագրարային համալսարանը ղեկավարվում է թվային, տառային նիշերով և ռեյտինգային գնահատման 100 միավորային համակարգով (աղ. 1):

Ուսումնառության արդյունքների և գիտելիքների գնահատման համար կիրառվում է տառային գնահատականների 4 միավորային գնահատման սանդղակը՝ A (գերազանց), B (լավ), C (բավարար), D (անբավարար), F (չներկայացած, անավարտ): Որոշ դասընթացներից կամ մոդուլներից ուսանողները գնահատվում են S (ստուգված) և U (չստուգված) սկզբունքով:

Աղյուսակ 1

***Գիտելիքների գնահատման համակարգը***

| Ռեյտինգային միավորները | Գնահատման սանդղակ | | Համապատասխան տառային և թվային գնահատականն ըստ ECTS-ի | |
|---|---|---|---|---|
| | 5 միավորային սանդղակ | 20 միավորային սանդղակ | տառային | թվային |
| 95-100 | 5 | 20 | A + | 4,0 |
| 87-94 | | 19 | A | 4,0 |
| 81-86 | | 18 | A – | 3,7 |
| 75-80 | 4 | 17 | B + | 3,3 |
| 67-74 | | 15-16 | B | 3,0 |
| 61-66 | | 14 | B – | 2,7 |
| 55-60 | 3 | 13 | C+ | 2,3 |
| 46-54 | | 9-12 | C | 2,0 |
| 40-45 | | 8 | C – | 1,7 |
| < 40 | 2 | Անբավարար | D | 1 |
| 0 | | Չներկայացած | F | 0 |
| ≥ 40 | | Ստուգված | S | - |
| < 40 | | Չստուգված | U | - |

ՈՒսանողների գիտելիքների գնահատման առավել տարբերակման նպատակով A, B և C գնահատականներին կարելի է կցել (+) կամ (-) նշաններ, որոնք բարձրացնում կամ իջեցնում են գնահատականը:

Եթե ուսանողը որևէ քննական առարկայից վաստակել է 8 (20 միավորային համակարգով) կամ 40 (ռեյտինգային) միավորից ցածր գնահատական կամ ստուգարքային առարկայից ստացել է «չստուգված», ապա այդ առարկայից ուսանողներին կրեդիտներ չեն տրվում:

Ստուգարքով ավարտվող առարկայի կրեդիտն ակադեմիական տեղեկագրում հաշվարկվում է գումարային կրեդիտների որոշման մեջ, սակայն այն չի հաշվարկվում ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) որոշման ժամանակ:

## ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Գիտելիքների գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրով, այնպես էլ «ստուգված», «չստուգված» սկզբունքով:

ՀԱԱՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների կանոնավոր կերպով (պարբերական) ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոն գնահատման համակարգը հնարավորություն է տալիս գնահատել ուսանողի ողջ ուսումնառության գործընթացի արդյունքը և ստացած գիտելիքների պաշարը:

Գիտելիքների գնահատման համակարգը կոչվում է բազմագործոն, քանի որ գնահատումն իրականացվում է մի շարք գործոններով (բաղադրիչներով)՝ ուսանողի հաճախումները, լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքներին մասնակցության ակտիվության աստիճանը, արտալսարանային (ինքնուրույն) առաջադրանքների կատարման մակարդակը, ընթացիկ, միջանկյալ և վերջնական (ամփոփիչ) քննությունների արդյունքները: Ընդ որում՝ յուրաքանչյուր ամբիոնի յուրաքանչյուր առարկան կարող է ունենալ իր յուրահատուկ գործոնները:

## ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ուսանողների գիտելիքների գնահատումը համալսարանում կատարվում է ըստ տվյալ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների աշխատածավալի և պարապմունքի ձևի: Ուստի, հաշվի առնելով տվյալ առարկայի կարևորությունն ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման մեջ՝ դասավանդվող առարկաներն ըստ գնահատման ձևի բաժանվում են՝

- եզրափակիչ գնահատումով (քննական) առարկաներ,
- առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքային) առարկաներ:

Ընթացիկ և եզրափակիչ գնահատմամբ քննություններն անցկացվում են գրավոր: Սահմանված կարգով ամբիոնի և ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացված հիմնավորման ու թույլտվության ստացման դեպքում քննությունները կարող են կազմակերպվել գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ:

Առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքային) առարկաները գնահատվում են կիսամյակի ընթացիկ ստուգումների, լաբորատոր, գործնական աշխատանքների կատարման և հանձնման, սեմինարների և նման այլ հանձնարարությունների (ռեֆերատ, լրացուցիչ գրականության և գիտական աշխատանքների ուսումնասիրության) կատարողականի ստուգման միջոցով:

Գիտելիքների եզրափակիչ գնահատման ժամանակ ընթացիկ միջանկյալ ստուգումների, քննությունների դրական արդյունքների հաշվառումը պարտադիր է: Տվյալ առարկայի ընթացիկ քննությունը(ները) չհանձնած կամ դրանցից որևէ մեկից 8-ից ցածր միավոր հավաքած ուսանողը եզրափակիչ գնահատման (քննության) ժամանակ պարտավոր է սահմանված ձևով հանձնել քննությունն ամբողջությամբ կամ չհանձնած մասից: Միջանկյալ քննությունից(ներից) դրական գնահատական(ներ) ստացած ուսանողին իրավունք է վերապահվում ամփոփիչ քննության ժամանակ վերահանձնել այն առարկայի ողջ ծրագրով:

Քննությունների արդյունքները (ընթացիկ, եզրափակիչ) գնահատվում են 20 միավորային համակարգով (ամբողջական միավորով) և գրանցվում համապատասխան տեղեկագրերում:

## ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական ECTS համակարգը (European Credit Transfer System) միասնական համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը (աշխատածավալը) 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը հեշտացնելու համար:

Կրեդիտն ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավորն է, որը տրվում է ուսանողին յուրաքանչյուր դասընթաց (կրթական մոդուլ) ավարտելու, դրա ելքային արդյունքները ձեռք բերելու և դրական գնահատելուց հետո:

<u>ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշները.</u>

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցություն դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին ու պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարում, քննություններին նախապատրաստում և դրանց հանձնում, անհատական հետազոտություն և այլն,
- կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտն ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: ՈՒսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

*Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները* երկուսն են.

ա) կրեդիտների կուտակման գործառույթը ուսանողին հնարավորություն է տալիս ընտրել դասախոսին, դասընթացները և դրանց յուրացման կիսամյակները, ինչպես նաև հնարավորություն է տալիս ուսումնառության ինտենսիվության կարգավորման, այսինքն ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն: Այն նաև հնարավորություն է տալիս ուսանողներին մեկ կամ երկու կիսամյակ ուսումնառել այլ բուհերում և կուտակած կրեդիտները փոխանցել հիմնական բուհ:
Այս գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

բ) կրեդիտների փոխանցման գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև:

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԾԱՎԱԼԸ) ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

1. ՀԱԱՀ-ում բակալավրի կրթական ծրագրով տարեկան բեռնվածությունը սահմանվում է 60 կրեդիտ, որը համարժեք է 1800 ժամի (60·30=1800).
   - տարվա շաբաթների թիվը՝ 52,
   - ուսումնական շաբաթների թիվը (ներառյալ 2 քննաշրջանները)՝ 40,
   - կիսամյակային ուսումնական շաբաթների թիվը (17 շաբաթ լսարանային + 3 շաբաթ քննաշրջան)՝ 20 շաբաթ,
   - ուսանողի օրական ծանրաբեռնվածությունը (6 ժամ լսարանային+3 ժամ անհատական և ինքնուրույն)՝ 9 ժամ,
   - ուսանողի շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 45 ժամ,
   - մեկ ուսումնական շաբաթին բաժին ընկնող կրեդիտների թիվը (45:30)՝ 1,5 կրեդիտ,
   - մեկ կիսամյակին բաժին ընկնող կրեդիտների թիվը (20x1,5 կրեդիտ)՝ 30 կրեդիտ,

- մեկ ուսումնական տարվա կրեդիտների թիվը (2 կիսամյակ x 30)՝ 60 կրեդիտ:

2. Մեկ կրեդիտը համարժեք է 30 ժամ ուսումնական բեռնվածության (լսարանային, արտալսարանային՝ ինքնուրույն և անհատական):
3. ՈՒսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 34-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին, 6-ը՝ կիսամյակային քննություններին: ՈՒսումնական գործընթացն իրականացվում է 2 կիսամյակով (յուրաքանչյուրը՝ 17-ական շաբաթ, բացառությամբ վերջին կիսամյակի):
4. ՈՒսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության (լսարանային և արտալսարանային) առավելագույն չափը սահմանվում է 45 ժամ, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի (45:30=1,5):
5. Բակալավրի ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է մինչև 30 ժամ (առանց ֆիզդաստիարակության ժամերի):
6. ՀԱԱՀ առկա ուսուցման համակարգի ուսանողը մեկ կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10 % թույլատրելի շեղումով), մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ, իսկ ծրագրի կատարման ավարտին՝ 280 կրեդիտ («Անասնաբուժություն» և «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտությունների համար՝ 300):

Առարկային հատկացված կրեդիտների թվի և լսարանային ժամերի միջև կապը միարժեք չէ: Կրեդիտների թիվը կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, գործնական կամ լաբորատոր աշխատանք, սեմինար, կուրսային նախագիծ կամ աշխատանք և այլն):

*Տե՛ս anau.am կայքում*
*Փաստաթղթեր/Ուղեցույցներ*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՈՄՍ

Ուսանողական տոմսն ուսանողի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ է, որը նրան տրամադրվում է ուսանողի կարգավիճակ ձեռք բերելուց հետո:

Ուսանողական տոմսում նշվում են ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը, ընդունվելու տարին, ֆակուլտետը, կրթական աստիճանը (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա), ուսանողական տոմսի համարը, վավերականության ժամկետը: Ուսանողական տոմսը սովորողներին հանձնում են ֆակուլտետների դեկանները:

Ուսանողական տոմսը կամ ստուգման գրքույկը կորցնելու դեպքում ուսանողը պետք է տեղեկացնի դեկանատի գործավարին, դիմում ներկայացնի ՀԱԱՀ ռեկտորին և վճարում կատարի այն վերականգնելու համար:

## ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Բուհ ընդունված յուրաքանչյուր ուսանող ուսումնառության սկզբում ստանում է ստուգման գրքույկ: Ստուգման գրքույկում նշվում են ուսուցման ձևը՝ առկա կամ հեռակա, կրթական աստիճանը, ֆակուլտետը, դասընթացների անվանումները, կրեդիտները, ուսանողի՝ դասընթացներին մասնակցության միավորները, ՄՈԳ-ը, ընթացիկ և եզրափակիչ քննությունների և ստուգարքների միավորները, դասընթացի արդյունարար գնահատականը՝ քննություն ընդունող դասախոսների և դեկանի ստորագրություններով հաստատված: Ստուգման գրքույկում նշվում են նաև տեղեկություններ պրակտիկայի և ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ:

## ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Դասախոսությունը գիտական-տեղեկատվական որևէ թեմայի վերաբերյալ դասախոսի կողմից տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն ուսանողին համապարփակ գիտելիքներ հաղորդելն է:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գործնական են կոչվում այն պարապմունքները, որոնք անցկացվում են դասախոսի ղեկավարությամբ և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային որոշակի մեթոդների յուրացմանը:

Գործնական պարապմունքների հիմնական տեսակներից է սեմինարը, որի ընթացքում ուսանողը սովորում է ոչ միայն բանավոր շարադրել նյութը, այլև պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները:

## ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Լաբորատոր աշխատանքների արդյունքում ուսանողների մոտ ձևավորվում են հետազոտությունների, գիտափորձերի իրականացման համար անհրաժեշտ հմտություններ, որոնք հիմնվում են տեսական դրույթների, ուսումնական թեմաների վրա: Պարապմունքների անցկացման համար կարող են ստեղծվել լաբորատոր պայմաններ և իրականացվել, օրինակ, դերային խաղեր, քիմիական փորձեր և այլն:

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Անհատական աշխատանքը նպատակ ունի օգնել ուսանողին դյուրացնելու նյութի ընկալումը: Անհրաժեշտության դեպքում ուսանողը դիմում է դասախոսին անհատական խորհրդատվություն ստանալու դասախոսություններին (լաբորատոր-գործնական պարապմունքներին) առնչվող առանցքային հարցերի, դրույթների պարզաբանման և բացահայտման համար:

Անհատական աշխատանքն իր մեջ ընդգրկում է նաև ռեֆերատների, կուրսային աշխատանքների (նախագծերի) կատարումը, զեկուցումների, ուսումնահետազոտական աշխատանքների գծով դասախոսի հետ ուսանողի համատեղ արտալսարանային աշխատանքը և այլն:

## ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ինքնուրույն աշխատանքը դասախոսի հետ ոչ կոնտակտային ծանրաբեռնվածությունն է, որը նա կարող է կատարել գրադարանում, լաբորատորիայում, համակարգչային (ինտերնետային) սրահներում, կամ ՀԱԱՀ-ից դուրս:

Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացից (առարկայից) կարող է հանձնարարվել 1 կամ 2 ինքնուրույն կամ թիմային առաջադրանք: Թիմային աշխատանքը կազմակերպելու նպատակով ենթախումբը բաժանվում է 3-5 ուսանողներից բաղկացած խմբերի: ՈՒսանողի ինքնուրույն աշխատանքը գնահատում են 100 միավորային համակարգով՝ հիմք ընդունելով կիսամյակի (տարվա) ընթացքում ինքնուրույն աշխատանքի միջին արդյունքները:

Ինքնուրույն աշխատանքի թեմատիկան պետք է բխի տվյալ առարկայի ծրագրից՝ որպես ծրագրային նյութի հավելում և նպաստի ուսանողի հմտությունների ձեռքբերմանը:

Ինքնուրույն աշխատանքը գնահատվում է մի քանի բաղկացուցիչներով՝ ինքնուրույն գրավոր աշխատանք, ինքնուրույն աշխատանքների ներկայացում կամ պաշտպանություն, զեկուցում ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներում, տեխնիկական միջոցների օգտագործում (ձևավորում), նյութի առավել գրագետ ու հետաքրքրական բանավոր ներկայացում, վիճակագրական վերլուծություններ, օգտագործված գրականություն (տեղեկատվական նյութեր):

Ուսանողի ինքնուրույն գիտական աշխատանքի կարևորագույն մասն են կազմում կուրսային և ավարտական աշխատանքները:

## ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարման ժամանակ ուսանողը հնարավորություն է ստանում լուծել արտադրական ստույգ (հստակ) առաջադրանքներ, որոնք իրականացնելիս նա սկսում է գիտակցել պատասխանատվություն իր կողմից կատարած ճարտարագիտական, տեխնիկական, տեխնոլոգիական որոշումների համար, նրանց մեջ սերմանվում են ուսումնահետազոտական ու գիտահետազոտական աշխատանքների տարբեր տարրեր:

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ավարտական աշխատանքները հիմնականում կազմված են տեսական և գործնական մասերից: Ուսանողը ավարտական աշխատանքները գրում է ղեկավարի օժանդակությամբ և պաշտպանում է հանձնաժողովի առջև:

Գիտական աշխատանքներն ունեն հստակ կառուցվածք և որոշակի ծավալ: Դրանք կատարելուց առաջ ուսանողը պետք է ծանոթ լինի գիտական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

Պետական քննությունների հետ մեկտեղ՝ ավարտական աշխատանքը բակալավրիատի ուսումնական գործընթացի վերջին փուլն է կազմում:

## ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒսանողի ակտիվությունը դասախոսի կողմից գնահատվում է 100 միավորային համակարգով՝ կիսամյակի ընթացքում անցկացված լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքների, ինչպես նաև դասախոսությունների ժամանակ՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ:

Գնահատման արդյունքները կիսամյակի վերջում՝ ամփոփիչ քննաշրջանից առաջ, արձանագրվում են ամբիոնում՝ հատուկ ձևաթերթի վրա:

Կիսամյակի ընթացքում առանձին մատյանում դասախոսը կատարում է ընթացիկ ակտիվության վերաբերյալ նշումներ (գնահատումներ), որոնց հիման վրա էլ հաշվարկվում է ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը:

## ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ուսանողների՝ դասերին հաճախելը պարտադիր է և գնահատականի ձևավորման բաղադրիչ է: Հաճախումները հաշվառվում են դասախոսությունների, լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքների ժամանակ, ուսումնամեթոդական կենտրոնի կողմից տրամադրված մատյաններում:

## ՊՐԱԿՏԻԿԱ

Պրակտիկան ուսումնական գործունեության տեսակ է՝ ուղղված ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների ամրապնդմանը և զարգացմանը: ՀԱԱՀ-ում պրակտիկայի կազմակերպման և անցկացման նպատակներն են՝

– տվյալ մասնագիտության շրջանակներում մասնագիտական գործնական հմտությունների և կարողությունների ձևավորումը և զարգացումը,

– ընդհանուր հանրակրթական և մասնագիտական դասընթացներից ստացված գիտելիքների ամրապնդումը,
– տվյալ մասնագիտության շրջանակներում անհրաժեշտ մեթոդների, կարողությունների և ունակությունների ձեռք բերումը,
– մասնագիտության մեջ ներառված առանձին դասընթացների և մասնագիտացման խորացված ուսումնասիրությունը,
– պրակտիկայի արդյունքների օգտագործումը դիպլոմային նախագծի/աշխատանքի պատրաստման համար:

### ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդատվության ժամանակ ուսանողները պարզաբանում են անհասկանալի հարցերը, դասախոսության (լաբորատոր-գործնական պարապմունքների) բովանդակության կամ մեթոդիկայի հետ կապված խնդիրները, ինչպես նաև լրացնում են բաց թողած դասախոսությունները:

### ԿԱՄԸՆՏՐՈՎԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Ուսումնական ծրագիրը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով.
- ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն:

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Moodle համակարգն իրենից ներկայացնում է էլեկտրոնային ուսուցման հարթակ, որի շնորհիվ իրականացվում է էլեկտրոնային ուսուցում, այսինքն գիտելիքների փոխանցում և ուսուցման գործընթացի կառավարում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Moodle էլեկտրոնային ուսուցման համակարգը բաղկացած է երեք հիմնական մոդուլներից. ուսուցման կառավարման համակարգեր, ուսուցման բովանդակություն, հեղինակային գործիքներ: Moodle համակարգի հիմնական առավելություններն են՝ ուսուցման առավել արդյունավետ եղանակ, քանի որ իրականացվում է

ցանկացած աշխարհագրական կետում, տնտեսապես ավելի շահավետ է, թույլ է տալիս ցանկացած ժամանակ մասնակցել դասընթացներին, և սովորողները կարող են ընտրել ուսուցման այն տարբերակները, որոնք համապատասխանում են յուրաքանչյուրի կրթական մակարդակին, և այն հնարավոր է համատեղել զբաղվածության հետ:

## OFFICE 365 ԱՄՊԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓԱԹԵԹ

Microsoft ամպային տեխնոլոգիաների փաթեթը նախատեսված է տարբեր բնույթի համատեղ աշխատանքների իրականացման, նախագծերի կառավարման համար: Office 365 փաթեթում ընդգրկված ծրագրերը թույլ են տալիս արդյունավետ աշխատել աշխարհի ցանկացած վայրից՝ թե՛ անհատական համակարգչից, և թե՛ բջջային հեռախոսներից. այն ուսանողներին տրամադրում է արդիական ծրագրային ապահովում, միասնական կապի հնարավորություն՝ հաղորդագրությունների փոխանակում, աուդիո-վիդեո կոնֆերանսներ: Այսպիսով, Office 365-ը հուսալի է, պարզ օգտագործման և կառավարման տեսակետից:

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կրթություն ստացողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ուսանողական կյանքի հիմնական մասն ապահովող երկու կարևոր կառույցների՝ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նկատմամբ:

ՀԱԱՀ-ի ուսանողական խորհուրդը Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի և Հայաստանի ուսանողության ազգային ասոցիացիայի հիմնադիր անդամ է: ՈՒԽ-ն ունի եռաստիճան կառուցվածք. բաղկացած է կուրսերի, ֆակուլտետների, համալսարանի խորհուրդներից: Ագրոնոմիական, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության, պարենամթերքի տեխնոլոգիաների, գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի, հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի, ագրոբիզնեսի և շուկայաբանության, տնտեսագիտական ֆակուլտետների, հեռակա ուսուցման դեպարտամենտի, մագիստրատուրայի և հանրակացարանի ՈՒԽ-ներն իրականացնում են նախագահության որոշումները, վերահսկում և կազմակերպում են ուսանողների իրավունքների ու պարտականությունների կատարումը, հետևում են ուսումնական գործընթացի իրականացմանը, ուսանողների առաջադիմության, գիտական գործունեության, կարգապահական խնդիրներին, ինչպես նաև սովորողների մասնագիտական և ոչ մասնագիտական ունակությունների դրսևորման համար ստեղծում են համապատասխան դաշտ, մշտական աշխատանքային կապ պահպանում ամբիոնների ու դեկանատների հետ:

Ուսանողական խորհուրդը բաղկացած է արտաքին կապերի, լրատվության, ուսումնակարգապահական, մշակույթի, սպորտի և ժամանցի հանձնաժողովներից, ինչպես նաև «Ուրախների և հնարամիտների», «Ինտելեկտ», «Էկոլոգ», ռազմահայրենասիրական ակումբներից:

1999 թ. ուսանողական խորհրդի ուսումնակրթական և գիտական խմբակի բազայի վրա կազմավորվեց կրթօջախի ուսանողական գիտական ընկերությունը: Հայաստանի ազգային ագրարային համալսարանում իրենց գործունեությունն են ծավալում ագրոնոմիական, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության, պարենամթերքի տեխնոլոգիաների, գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի, հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի, ագրոբիզնեսի և շուկայաբանության, տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողական գիտական ընկերությունները:

ՀԱԱՀ ՈՒԳԸ-ն կազմակերպում և իրականացնում է մի շարք ծրագրեր, քննարկումներ, օլիմպիադաներ, գիտաժողովներ: Կառույցը սերտ կապեր է հաստատել ԱՊՀ երկրների ագրարային առաջատար բուհերի հետ: Ագրարային համալսարանի՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները պարբերաբար մասնակցում են տարբեր երկրներում անցկացվող գիտական միջոցառումներին:

Ամենամյա գիտաժողովներում լավագույն զեկուցումներով հանդես եկած ուսանողներն արժանանում են պատվոգրերի, խրախուսական և դրամական մրցանակների: Այդ զեկուցումներից շատերը տպագրվում են «ՈՒԳԸ ամենամյա գիտաժողովների ժողովածու» գրքում:

## ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԱՀ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

*Հոգաբարձուների խորհուրդ*

Համալսարանի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը համալսարանի հոգաբարձուների խորհուրդն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով և բաղկացած է 28 անդամներից: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է հիմնադրի, լիազորված մարմնի ներկայացուցիչներից, ինչպես նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներից: Համալսարանի ուսանողության ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները՝

ա. ուսանողական խորհուրդների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմություն և

հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ցանկացած սովորող (ուսանող կամ ասպիրանտ),

բ. հաստատության ուսանողական խորհուրդն ընտրում է ֆակուլտետներից առաջադրված սովորողների թեկնածությունները և ներկայացնում լիազոր մարմին,

գ. ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

*Գիտական խորհուրդ*

Համալսարանի գիտական խորհուրդը ձևավորվում է սույն կանոնադրության համաձայն և համալսարանի ուսումնամեթոդական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է: Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ուսանողական խորհրդի նախագահը և համալսարանի ուսանողության ներկայացուցիչներ: Համալսարանի ուսանողության ներկայացուցիչների թիվը չի կարող պակաս լինել գիտական խորհրդի թվակազմի 25 տոկոսից:

*Ֆակուլտետի գիտական խորհուրդ*

Ֆակուլտետի գիտական խորհուրդը քննարկում է ֆակուլտետի կանոնադրությունը և այն ներկայացնում հաստատման, ընտրում է ֆակուլտետի դեկանին կամ սահմանված կարգով քննարկում և համալսարանի գիտական խորհրդի ընտրությանն է ներկայացնում դեկանի թեկնածուներին, լսում է դեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում է նրա գործունեությունը:

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմը, նրա ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ:

Ֆակուլտետի գիտական խորհրդում ընդգրկվում են ֆակուլտետի ուսխորհրդի նախագահը և արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչը: Գիտխորհրդի կազմի 25%-ը համալրվում է ֆակուլտետի ուսանողներից:

*Տե՛ս anau.am կայքում Ուսանողական կյանք*

# ՈՒՍԱՆՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱԱՀ ԳՐԱԴԱՐԱՆ

Էլեկտրոնային սպասարկման ներդրումը բուհի կարևորագույն ձեռքբերումներից է. ցանկացած ուսանող կարող է օնլայն եղանակով գրքեր պատվիրել:

Ագրարային համալսարանի կայքէջում առանձին մեծ բաժին է հատկացվել գրադարանին՝ library.anau.am: Այստեղ տեղեկություն է տրված գրադարանի մասին, ներկայացված են գրադարանի կառուցվածքը, օգտվելու կանոնները, առկա էլեկտրոնային գրքերը և նյութերը, գրադարանի կողմից բաժանորդագրված ամսագրերի ցանկը և դրանց ինտերնետային էջերի հղումները: Գրականության մուտքագրման, էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման, գրադարանային գործընթացների թվայնացման աշխատանքներն իրականացվում են ALEPH և KOHA գրադարանային ծրագրերով:

Գրադարանի էլեկտրոնային երկու ընթերցասրահներում(II մասնաշենք, IV հարկ, 425 սենյակ, II մասնաշենք, IV հարկ, 443 սենյակ) ընթերցողները կարող են օգտվել համացանցում առկա էլեկտրոնային գրքերից, գիտական և կրթական տեղեկատվական աղբյուրներից, էլեկտրոնային տվյալների բազաներից, որոնք հասանելի են միայն համալսարանի տարածքում:

## ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Գրադարանի ընթերցող դառնալու համար անհրաժեշտ է սպասարկման բաժին ներկայացնել 3x4 չափի 1 լուսանկար և անձնագիր: Ուսանողների և աշխատողների գրանցումը կատարվում է ընդունելության հրամանի հիման վրա:

Գեղարվեստական գրականությունը տրվում է 15 օր ժամկետով, իսկ ուսումնական գրականությունը, դասագրքերը՝ 1 կամ 2 կիսամյակ ժամկետով:

Վերցրած գրականության ժամկետները անհրաժեշտության դեպքում հնարավոր է երկարացնել:

Հազվագյուտ, հնատիպ, մեկ օրինակ գրականությունից, ինչպես նաև հանրագիտարաններից և ատենախոսություններից կարելի է օգտվել միայն ընթերցասրահներում:

Գրքի կորստի դեպքում ընթերցողը պարտավոր է փոխարինել այն մասնագիտական գրականությամբ:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ուսանողը պարտավոր է հանձնել իր մոտ եղած գրականությունը, այլապես ըստ ՀԱԱՀ ռեկտորի հրամանի չի փոխադրվի հաջորդ կուրս:

Գրադարանի կանոնները խախտելու դեպքում ընթերցողը զրկվում է գրադարանից օգտվելու իրավունքից:

Եթե ընթերցողն ավարտում կամ հեռացվում է համալսարանից, ապա դադարեցվում է գրադարանից օգտվելու նրա իրավունքը: Նա պարտավոր է վերադարձնել իր մոտ գտնվող գրականությունը: Շրջիկ թերթիկը ստորագրվում է միայն ընթերցողի մոտ եղած գրականությունը հանձնելուց հետո:

Գրադարանից օգտվելն անվճար է:

*Տե՛ս anau.am կայքում ՏՏ և ԻԾ կենտրոն/Գրադարան*

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը կապող օղակ է բուհի և գործատուների միջև: 2015-ից գործում է այս բաժնի կայքէջը՝ www.career.anau.am, որի միջոցով ուսանողներին ու շրջանավարտներին տրամադրվում է խորհրդատվություն և տեղեկատվություն թափուր աշխատատեղերի, վերապատրաստման, հարցազրույցներին նախապատրաստվելու, ինքնակենսագրական փաստաթղթերի կազմման վերաբերյալ, իսկ գործատուներին՝ աջակցություն համապատասխան աշխատակիցների ընտրության և աշխատանքի տեղավորման հարցերում:

*Տե՛ս anau.am կայքում ՏՏ և ԻԾ կենտրոն/ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժին*

## ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտն իրականացնում է բուհի միջազգային համագործակցությունը կրթության, գիտության և

խորհրդատվության ոլորտներում: Դեպարտամենտը բաղկացած է երկու՝ արտասահմանյան երկրների հետ կապերի և դրամաշնորհային ծրագրերի բաժիններից:

Արտաքին կապերի դեպարտամենտի ակտիվ գործունեության շնորհիվ ՀԱԱՀ-ը տարեցտարի ընդլայնվող աշխարհագրությամբ համագործակցում է տարբեր երկրների բուհերի և միջազգային ու արտասահմանյան բազմաթիվ կազմակերպությունների ու հիմնադրամների (USDA, SIDA, GTZ, FAO, UMCOR, ISTC, ICARDA, ICRA, Euronature, Heinz Fehr և այլն) հետ:

Ուսանողների ու դասախոսների փոխանակումներն հիմնականում իրականացվում են Էրազմուս +, Էրազմուս Մունդուս, TEMPUS, Երիտասարդ դասախոսների վերապատրաստման JFDP, Հյուսիսատլանտյան դաշինք («Գիտություն հանուն խաղաղության») ծրագրերի, DAAD, Նիդերլանդների Գյուղատնտեսության բնագավառում կիրառական հետազոտությունների զարգացման միջազգային կենտրոնի (ICRA), Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի (Գերմանիա), Շվեդիայի գյուղատնտեսական գիտությունների համալսարանի (ՇԳԳՀ), Ռուսաստանի Տիմիրյազևի անվան պետական ագրարային համալսարանի և մի շարք այլ բուհերի և կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրերի շրջանակներում:

*Տե՛ս anau.am կայքում SS և ԻԾ կենտրոն/ ՀԱԱՀ արտաքին կապերի դեպարտամենտ*

Արտաքին կապերի դեպարտամենտից ՀԱԱՀ-ի ուսանողները կարող են տեղեկանալ արտասահմանյան բուհերում ուսումը շարունակելու կամ վերապատրաստվելու հնարավորություն-ների, սեմինարների, ամառային դպրոցների վերաբերյալ: Նմանօրինակ հայտարարություններին ուսանողները կարող են հետևել դեպարտամենտի ֆեյսբուքյան էջում (ANAU Department of International Relations/ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտ), ՀԱԱՀ պաշտոնական կայքէջում կամ տեղեկանալ անմիջապես դեպարտամենտից:

## «ԱՐԱԲԿԻՐ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, ինչպես նաև այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացողները հնարավորություն ունեն հյուրընկալվել «Արաբկիր» ուսանողական հանրակացարանում:



Հանրակացարանը ուսանողներին առաջարկում է կեցության հետևյալ պայմանները. յուրաքանչյուր սենյակում 2 մահճակալ, 2 աթոռ, 1 սեղան: 4 հարկանի հանրակացարանի յուրաքանչյուր հարկում կա սանհանգույց, իսկ լողասենյակը գտնվում է 1-ին հարկում՝ տղաների և աղջիկների համար առանձնացված: Սենյակները ջեռուցվում են էլեկտրական տաքացուցիչներով: Վարձակալման արժեքը ՀԱԱՀ ուսանողների համար ամսական 3000 դրամ է, այլ բուհերի ուսանողների համար՝ 12000 դրամ:

Այլ բուհերի ուսանողները պետք է միջնորդագիր բերեն ռեկտորի անունով և դիմում գրեն գրասենյակում, իսկ մնացած ընթացակարգը նույնն է: Նշենք, որ ՀԱԱՀ-ի կողմից հատկացված ավտոբուսն ամեն օր հանրակացարանաբնակ ուսանողներին անվճար տեղափոխում է համալսարան:

**Հետադարձ կապ**

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 37
Հեռ. (+374010) 25 38 17
E-mail: info@anau.am

*Տե՛ս anau.am կայքում Սփորաբաժանումներ/ «ԱՐԱԲԿԻՐ» ուսանողական հանրակացարան*

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ

### ՀԱԱՀ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱԱՀ-ում գործում է պատմության թանգարանը:

Ներկայումս թանգարանի մշտական ցուցադրությունում ներկայացված են համալսարանի պատմությանն առնչվող, ինչպես նաև անվանի գիտնականների կյանքն ու գործունեությունը ներկայացնող բազմաթիվ նյութեր՝ փաստաթղթեր, գրքեր, լուսանկարներ, ամենատարբեր մրցույթներում և փառատոներում հաջողության հասած ուսանողների ու դասախոսների ստացած մեդալներ, մրցանակներ, գավաթներ, պատվոգրեր, հուշանվերներ, հնագույն գյուղատնտեսական գործիքներ (խնոցի, երկանք, աղաման, եղան,

կամ և այլն), հնագիտական բացառիկ արժեք ունեցող առարկաներ՝ սափորներ, սկահակներ, քրեղաններ, կժեր, կճուճներ, կարպետներ, գորգեր և այլն:

*Տե՛ս anau.am կայքում ՏՏ և ԻԾ կենտրոն/Պատմության թանգարան*

## ՇԱԽՄԱՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԱԿՈՒՄԲ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում շախմատի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունք կա:

2001թ. ՀԱԱՀ-ում տեղի է ունեցել Շախմատի թանգարանի հանդիսավոր բացումը: Թանգարանում ներկայացված են շախմատային խոշոր իրադարձությունների մասին պատմող արժեքավոր նյութեր, հայ շախմատիստների հաղթանակների պատմություններն ու այլ ուշագրավ տեղեկություններ:

Թանգարանում կազմակերպվում են շախմատի հանրապետական, միջբուհական առաջնություններ՝ մրցաշարեր և օլիմպիադաներ, միաժամանակյա մրցախաղեր և միջոցառումներ, հանդիպումներ շախմատի հայազգի գրոսմայստերների հետ:

Թանգարանի տպավորությունների մատյանի էջերում տեղ են գտել Ռ. Վահանյանի, Վ. Հակոբյանի, Լ. Արոնյանի, Ս. Լպուտյանի, Կ. Ասրյանի, Գ. Սարգսյանի, Ա. Անաստասյանի, Ա. Մինասյանի, Ա. Պետրոսյանի, Տ. Նալբանդյանի, Ա. Եղիազարյանի, Տ. Պետրոսյանի, Է. Դանիելյանի, Լ. Մկրտչյանի, Ն. Աղինյանի, Ա. Դեմիրխանյանի, Գ. Հակոբյանի, Գ. Խլղաթյանի և տաղանդավոր այլ շախմատիստների, ինչպես նաև շախմատասերների, հանրապետության ականավոր գործիչների և այլոց գրառումները:

Թանգարանի հիմնադիրն է դոցենտ Ռաֆիկ Չատինյանը:

*Տե՛ս anau.am կայքում Սպորտ և մշակույթ/Շախմատի թանգարան*

## ԻՆՔՆԱԳՈՐԾ ԽՈՒՄԲ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների նաև ոչ մասնագիտական ունակությունների դրսևորմանը: Բուհի ինքնագործ խումբը հիմնադրվել է 2003 թվականին: Ակումբին կից գործում է երգի-պարի համույթը, որի ղեկավարն ու դիրիժորն Անդրկովկասյան մրցույթների և միջազգային փառատոնի դափնեկիր Ռուդոլֆ Աբաղյանն է:

Ակումբում անդամագրված է մոտ 40 ուսանող: Ամենօրյա անհատական պարապմունքների շնորհիվ ուսանողները կատարելագործում են իրենց վոկալի, երաժշտական և պարային ունակությունները:

Համույթը բազմաթիվ համերգներ է ունեցել Ա. Խաչատրյանի անվան համերգասրահում, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում, ծերանոցներում, մանկատներում, զորամասերում, մարզերում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում: Մասնակցել է միջբուհական փառատոնների, արժանացել բազմաթիվ շնորհակալագրերի և մրցանակների:

*Տե՛ս anau.am կայքում Սպորտ և մշակույթ/Ինքնագործ խումբ*

## «ՋԱՐԹՈՆՔ» ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ

Համալսարանի ուսանողները, դասախոսներն ու աշխատակիցները հնարավորություն ունեն անմոռանալի ակնթարթներ վայելել «Ջարթոնք» հանգստյան տանը: Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղում գտնվող գողտրիկ անկյունում ստեղծված են լիակատար հանգստի և ժամանցի համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Հանգստյան տունը հագեցած

է լուսավոր ու հարմարավետ առանձնասենյակներով: Կենվորներն ապահովվում են օրական երեքանգամյա սննդով:

Աղավնաձորի հանգստյան տանը գործում է ճկուն զեղչային համակարգ: Հանգստյան տան տարածքում գործում են վոլեյբոլի և ֆուտբոլի խաղահրապարակներ, բիլիարդի և սեղանի թենիսի խաղասրահներ, մանուկների համար նախատեսված լողավազան, սեմինարների և գործնական հանդիպումների համար սենյակ, ինտելեկտուալ, մշակութային և այլ միջոցառումների անցկացման համար նախատեսված դահլիճ, ավտոկայանատեղ, բնության գրկում առանձնանալու համար տաղավարներ, մանկական խաղահրապարակներ:

*Տե՛ս anau.am կայքում Սպորտաբաժանումներ/ «ՀԱՐԹՈՆՔ» հանգստյան տուն*

# ՀԱԱՀ-Ի ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

| | |
|---|---|
| | Պաշտոնական կայքէջ՝ www.anau.am |
| | ՀԱԱՀ գիտական գրադարանի կայքէջ՝ library.anau.am |
| | ՀԱԱՀ շրջանավարտների, դասախոսների և երախտավորների կայք-շտեմարան՝ persons.anau.am |
| | Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կայքէջ՝ career.anau.am |
| | Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի կայքէջ՝ ticas.anau.am |
| | «ՀԱՍԿ» պաշտոնաթերթ<br>http://anau.am/hask |
| | ՀԱԱՀ տեղեկագիր<br>http://anau.am/teghekagir |
| | ՀԱԱՀ ալիք |
| | ՀԱԱՀ ֆեյսբուքյան պաշտոնական էջ<br>https://www.facebook.com/ANAU1930/ |
| | ՀԱԱՀ պատկերասրահ<br>https://www.flickr.com/photos/armenian_national_agrarian_university |
| | Linkedin պաշտոնական էջ<br>https://www.linkedin.com/company/armenian-national-agrarian-university |